«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ
Հանրապետության 37, Երևան, 0010, ՀՀ

Ֆոնդի Տարեկան հաշվետվություն 2014 մարտի 11-ից (գործունեությունը սկսելու ամսաթվից) մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար
**«Ցե-Կվադրատ Ամպեգա Կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ-Պ»**

## Բովանդակություն

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ....... 3
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ....... 3
ՖՈՆԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ....... 4
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ....... 5
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ....... 6

1. Ֆոնդը....... 6
2. Ֆոնդի տվյալները ընթացիկ ֆինանսական տարվա վերջին 4 եռամսյակի համար....... 8
3. Ֆոնդի ակտիվների և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն....... 8
4. Պորտֆելի ցուցակումը և զուտ ակտիվների արժեքի կազմը ....... 9

Deloitte.

Դելոյթ Արմենիա ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Ամիրյան փող.
4/6, Գրիար բիզնես կենտրոն,
3-րդ հարկ
Հեռ՝ +374 10 52 65 20
Ֆաքս՝ +374 10 52 75 20
www.deloitte.am

## ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Ցե-Կվադրատ Ամպեգա կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ-Պ»-ի մասնակիցներին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ցե-Կվադրատ Ամպեգա Կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ- Պ»-ի կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ զուտ ակտիվների մասին հաշվետվությունը, 2014 մարտի 11-ից (գործունեությունը սկսելու ամսաթիվ) մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի ֆոնդի արդյունքների մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և այլ բացատրական տեղեկատվություն:

*Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Ղեկավարությունը պատասխանատու է Ավստրիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համակարգի ապահովման համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

*Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է՝ մեր կողմից իրականացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտը իրականացրեցինք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողություններից, ներառյալ՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները նաև ներառում են ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորվածության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

«Դելոյթ» անվանումը վերաբերում է երաշխիքով սահմանափակված «Դելոյթ Թուշ Թոմացու Լիմիթեդ» բրիտանական մասնավոր ընկերությանը, ինչպես նաև դրա անդամ ֆիրմաների ցանցը ներկայացնող ցանկացած մեկ կամ մի քանի կազմակերպության, որոնցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է առանձին և անկախ իրավաբանական անձ: «ԴելոյթԹուշԹոմացուԼիմիթեդ»-ի, նրա անդամ ֆիրմաների և իրավական կառուցվածքի մասին տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte.com/about: ԱՊՀ-ում «Դելոյթ»-ի իրավական կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte.com/am/about:
© 2015 «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

*Կարծիք*

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ցե-Կվադրատ Ամպեգա կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ-Պ»-ի ֆինանսական վիճակը և 2014 մարտի 11-ից (գործունեությունը սկսելու ամսաթիվ) մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքները և զուտ ակտիվներում փոփոխությունները՝ համաձայն Ավստրիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների:

**Սրբուհի Հակոբյան**
Գործադիր տնօրեն
«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ

**Արփինե Ղանդյան**
Աուդիտի ղեկավար

Երևան, Հայաստանի Հանրապետություն
30 ապրիլի, 2015թ.

# ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| ՀՀ դրամով | | 31 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014Թ. |
|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | |
| Պարտատոմսեր | 20.836.602,53 | |
| Դրամական միջոցներ | 4.998,62 | |
| Ավանդ | 54.090.215,00 | |
| Հաշվեգրված տոկոս | 2,757,222.18 | 77.689.038,33 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ** | | **77.689.038,33** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | |
| Հաշվեգրումներ եկամտի գծով | | |
| Հաշվեգրումներ վճարների գծով | (189,126.02) | (189,126.02) |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | **(189,126.02)** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ** | | **77,499,912.31** |

Երևան, 30 ապրիլի 2015թ.

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ

**Արման Վարդանյան**
Գլխավոր գործադիր տնօրեն

**Օֆելյա Աղաբարյան**
Գլխավոր հաշվապահ

# ՖՈՆԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| **ՀՀ դրամով** | | **2014 ՄԱՐՏԻ 11-ԻՑ (ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹՎԻՑ) ՄԻՆՉԵՎ 2014Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ** |
|---|---|---|
| **Ա) ՖՈՆԴԻ ԻՐԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔ** | | |
| **Ֆոնդի սովորական արդյունք** | | |
| **Եկամուտ (առանց փակման գնի)** | | |
| Տոկոսային եկամուտ | 4,216,380.21 | 4,216,380.21 |
| **Ծախսեր** | | |
| Կառավարչի պարգևավճար | (348.340,20) | |
| Աուդիտի վճար | (132.601,42) | |
| Երաշխիքային վճար | (5.872,67) | (486.814,29) |
| **Ֆոնդի սովորական արդյունք** | | **3.729.565,92** |
| **Իրացված փակման գին** | | |
| Գործարքի միջնորդավճարներ | (13.711,14) | |
| Արտարժութային տատանումների ազդեցություն բանկային հաշիվների վրա | (32.990,00) | |
| **Իրացված փակման գին** | | **(46.701,14)** |
| **Ֆոնդի իրացված արդյունք** | | **3.682.864,78** |
| **Բ) ՉԻՐԱՑՎԱԾ ՓԱԿՄԱՆ ԳԻՆ** | | |
| Չիրացված փակման գնի փոփոխություն | (1.579.704,47) | |
| Ընդամենը չիրացված զուտ ակտիվների արժեք | | **(1.579.704,47)** |
| **Գ) ԵԿԱՄՏԻ ՃՇԳՐՏՈՒՄ** | | |
| Եկամտի ճշգրտում ֆինանսական տարվա ընթացքում եկամտի գծով | 0,00 | |
| Եկամտի ճշգրտում ֆինանսական տարվա ընթացքում նախկինում եկամտի գծով | 0,00 | 0,00 |
| | | 0,00 |
| **ՖՈՆԴԻ ՀԱՄԱԽԱՌՆ ԱՐԴՅՈՒՆՔ** | | **2.103.160,31** |

Նախորդ հաշվետու տարվա արդյունքները ներառում են գործարքի գծով բացահայտված ծախսերը 13.711.14 դրամի չափով:

Երևան, 30 ապրիլի 2015թ.

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ

**Արման Վարդանյան**
Գլխավոր գործադիր տնօրեն

**Օֆելյա Աղաքարյան**
Գլխավոր հաշվապահ

# ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| ՀՀ դրամով | | 2014 ՄԱՐՏԻ 11-ԻՑ (ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹՎԻՑ) ՄԻՆՉև 2014Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ |
|---|---|---|
| **ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ 2014Թ ՄԱՐՏԻ 11-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ (0,000 ՓԱՅ)** | | **0,00** |
| **Բաշխում (0,00 ՀՀ դրամ x 0,00 փայ)** | | **0,00** |
| **Փայերի փոփոխություն** | | |
| Թողարկում (73.130,075 units) | 75.396.752,00 | |
| Մարում | 0,00 | |
| Համապատասխանաբար եկամտի ճշգրտում | 0,00 | **75.396.752,00** |
| **Ժամանակաշրջանի ֆոնդի արդյունք** | | **2.103.160,31** |
| **ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔ 31 դեկտեմբերի 2014թ. դրությամբ (73.130,075 փայ)** | | **77.499.912,31** |

Երևան, 30 ապրիլի 2015թ.

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ

**Արման Վարդանյան**
Գլխավոր գործադիր տնօրեն

**Օֆելյա Աղաքարյան**
Գլխավոր հաշվապահ

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## 1. Ֆոնդը

«Ցե-Կվադրատ Ամպեգա Կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ-Պ»-ն հիմնադրվել է 2014թ. հունվարի 1-ին և սկսել է գործունեությունը 2014թ. մարտի 11-ից: Ֆոնդի գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Հանրապետության 37: Ֆոնդի կառավարիչն է «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որն ավստրիական «Ցե-Կվադրատ» ներդրումային ընկերության (C-QUADRAT Investment AG) (Վիենա, Ավստրիա) և գերմանական «Տալանքս ասեթ մենեջմենթ» (Talanx Asset Management GmbH) (Քյոլն, Գերմանիա) ընկերության համատեղ ձեռնարկությունն է: «Ցե-Կվադրատ»-ը (C-QUADRAT) ակտիվների կառավարիչ է, որը մասնագիտացած է բացարձակ և ընդհանուր եկամտաբերության քանակական և հայտեցողական ռազմավարություններում: Կազմակերպությունը հիմնադրվել է 1991 թվականին: 2006 թվականից այն ցուցակվում է Ֆրանկֆուրտի ֆոնդային բորսայի առաջնային հարթակում, իսկ 2008 թվականի մայիսից՝ նաև Վիեննայի ֆոնդային բորսայում: «Տալանքս ասեթ մենեջմենթ» (Talanx Asset Management) ընկերությունը ստեղծվել է «Ամպեգա ինվեսթմենթ» (Ampega Investment) և Գերմանիայի մեծությամբ երրորդ ապահովագրական խմբի՝ «Տալանքս» (Talanx AG)-ի ֆինանսական ծառայությունների «Տալանքս Իմմոբիլեն Մենեջմենթ» (Talanx Immobilien Management) ընկերությունների համակցությամբ:

### Ընդհանուր տեղեկություններ

| | |
|---|---|
| *Ֆոնդի կառավարիչ* | **«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն**<br>Գրանցման հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Հանրապետության 37<br>Հիմնադրման ամսաթիվ՝ 29 նոյեմբերի 2013թ.<br>Բաժնետիրական կառուցվածք՝<br>74,9 % Ցե-Կվադրատ, 25,1% «Տալանքս ասեթ մենեջմենթ»<br>Ընկերության Ղեկավարությունը՝<br>Արման Վարդանյան (Գլխավոր գործադիր տնօրեն)<br>Կոնրադ Կարներ (Ֆինանսական տնօրեն) |
| *Տնօրենների խորհուրդ* | Էռնստ-Լյուդվիգ Դրայս (Խորհրդի նախագահ)<br>Անդրեաս Վիմմեր<br>Մարտին Գրատց<br>Յոհաննես Կարչեր |
| *Պահառու բանկ* | Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա բաց բաժնետիրական ընկերություն (մասնակիցների և արժեթղթերի պահառու և ռեեստրավար)<br>«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ (դրամական միջոցներ) |
| *Աուդիտոր* | «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ |

Պորտֆելի հաշվառման արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է (ՀՀ դրամ): Ֆինանսական հաշվետվություններում տոկոսային արտահայտությամբ ներկայացված դիրքերը ներկայացված են որպես զուտ ակտիվների նկատմամբ հաշվարկված տոկոսային դրույք հաշվետու ամսաթվի դրությամբ (%):

Տարեկան ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են Ավստրիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների համապատասխան: Տարեկան ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ըստ Investmentfondsgesetz 2011 – InvFG 2011 սահմանված ներկայացման ձևաչափերի: Հաշվետվություններում ներկայացված հաշվետու ժամանակաշրջանը 2014 մարտի 11-ից (գործունեությունը սկսելու ամսաթվից) մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանն է:

**Ֆոնդի կանոնները.** Ֆոնդի կանոնները և պարբերական հաշվետվությունները, ինչպես նաև փայերի թողարկման և/կամ վաճառքի վերաբերյալ տեղեկությունները և կանոնները, Ֆոնդի ներդրումային նպատակները և ներդրումային քաղաքականությունը, ինչպես նաև այլ տեղեկատվությունը զետեղված և հասանելի են Ֆոնդի մենեջերի պաշտոնական վեբ-կայքում:

**Ակտիվների գնահատման կանոնները.** Ֆինանսական գործիքները սկզբնապես չափվում են պատմական արժեքով և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում իրենց ներկա արժեքով, որը իրենց վերջին հասանելի շուկայական արժեքն է, կամ շուկայի բացակայության դեպքում արտաքին ռեսուրսների կամ ֆինանսական մոդելների միջոցով որոշված արժեքը:

Արժեթղթերի ներկա արժեքի միջև տարբերությունները որոշվում են վերը նշված եղանակով և նրանց սկզբնական պատմական արժեքը ճանաչվում է հաշվետվություններում որպես գնահատումներում փոփոխություն: Արժեթղթերով գործառնությունները գրանցվում են առքուվաճառքի ամսաթվով:

Պորտֆելի արժույթից տարբեր արժույթով գնանշված արժեթղթերը գնահատվում են համաձայն վերը նշված եղանակի և այնուհետև փոխարկվում են պորտֆելի արժույթի՝ գնահատման ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքով:

**Ավանդներ.** Ավանդները գնահատվում են գծային մեթոդով:

**Կարգավորվող շուկայում կամ համանման հարթակում առքուվաճառքի ենթարկվող բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր.** Զուտ ակտիվների արժեքը հաշվարկելիս կարգավորվող շուկայում կամ համանման հարթակում առքուվաճառքի ենթարկվող բաժնետոմսերը և այլ արժեթղթերը գնահատվում են շուկայի փակման դրությամբ վերջին հասանելի գործող գնի հիման վրա:

Պարտատոմսերը և այլ համանման արժեթղթերը գնահատվում են ֆինանսական ծառայություններ մատուցող տարբեր կառույցների կողմից ծանուցված փակման գներով:

**Կարգավորվող շուկայում կամ համանման հարթակում առքուվաճառքի չենթարկվող բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր.** Կարգավորվող շուկայում առքուվաճառքի չենթարկվող բաժնետոմսերը գնահատվում են Ֆոնդի կառավարչի կողմից՝ օգտագործելով զուտ կապիտալի և շահութաբերության վրա հիմնված մեթոդները, հաշվի առնելով վերջին էական գործարքներում օգտագործված գները:

ՀՀ պետական պարտատոմսերը գնահատվում են՝ օգտագործելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված շուկայական դրույքաչափերը:

**Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներ (UCITS).** UCITS փայերը կամ բաժնետոմսերը գնահատվում են մեկ փային բաժին ընկնող զուտ ակտիվների արժեքով:

**Հարկում.** Ֆոնդի գործունեությունը կարգավորորող Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության համաձայն, Ֆոնդի շահույթը, եկամուտները կամ կապիտալի հավելաճից օգուտները ենթակա չեն հարկման:

**Կառավարման վճարներ.** Կառավարման վճարները հաշվարկվում են ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հիման վրա: Այս պարգևավճարները ներկայացվում են Ֆոնդի իրացված եկամտի արդյունքներում: Կառավարման վճարներն ամբողջությամբ վճարվում են ֆոնդի կառավարչին, որը կրում է ֆոնդի բոլոր գործառնական ծախսերը, բացառությամբ աուդիտի վճարը և Կենսաթոշակային երաշխիքային ֆոնդի վճարը: Կառավարման վճարները չեն ներառում գործարքի հետ կապված ծախսերը: Կառավարչի պարգևավճարը հաշվարկվում է 1.0%-ի չափով, ներառյալ բոլոր կիրառելի հարկերը:

**Բաշխումներ փայատերերին.** Ֆոնդի եկամուտը չի բաշխվելու փայատերերին, այլ վերստին ներդրվելու է Ֆոնդում:

**Գլոբալ ռիսկերի ենթարկվածության հաշվարկի մեթոդները.** Գլոբալ ռիսկերի ենթարկվածության հաշվարկի մեթոդները, ներառյալ՝ ռիսկի ենթակա արժեքը, ձևակերպվում և ներդրվում են Ֆոնդի՝ գործունեությունը սկսելու և պորտֆելի ձևավորմանը համապատասխան:

## 2. Ֆոնդի տվյալները ընթացիկ ֆինանսական տարվա վերջին 4 եռամսյակի համար

| Ամսաթիվը | Արժույթը | Ակտիվների զուտ արժեքը | Ակտիվների զուտ արժեքը ՄԵԿ ՓԱՅԻ ԴԻՄԱՑ | Բաշխումը ԸՆԴԱՄԵՆԸ | Բաշխումը ԸՍՏ ՓԱՅԻ |
|---|---|---|---|---|---|
| 31 դեկտեմբերի 2014թ. | ՀՀ ԴՐԱՄ | 77.499.912,31 | 1.059,7543 | 0,00 | 0,00 |
| 30 սեպտեմբերի 2014թ. | ՀՀ ԴՐԱՄ | 56.655.200,42 | 1.059,2852 | 0,00 | 0,00 |
| 30 հունիսի 2014թ. | ՀՀ ԴՐԱՄ | 55.112.130,59 | 1.030,4344 | 0,00 | 0,00 |
| 31 մարտի 2014թ. | ՀՀ ԴՐԱՄ | 6.861.199,27 | 1.004,086 | 0,00 | 0,00 |

## 3. Ֆոնդի ակտիվների և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

| | |
|---|---|
| **Զուտ ակտիվների արժեքը փայի մեկ միավորի հաշվով ֆինանսական տարվա սկզբի դրությամբ ՀՀ դրամով առ 11 մարտի, 2014թ.** | **1.000,00 ՀՀ ԴՐԱՄ** |
| **Զուտ ակտիվների արժեքը փայի մեկ միավորի հաշվով ֆինանսական տարվա վերջի դրությամբ ՀՀ դրամով առ 31 դեկտեմբերի 2014թ.** | **1.059,75 ՀՀ ԴՐԱՄ** |
| **Զուտ եկամուտ/զուտ կորուստփայի մեկ միավորի հաշվով 2014թ մարտի 11-ից 2014թ դեկտեմբերի 31 ընկած ժամանակահատվածում** | **59,75 ՀՀ ԴՐԱՄ** |
| **Փայի մեկ միավորի կատարողականը ֆինանսական տարվա համար տոկոսային արտահայտությամբ, %** | **5,98%** |

## 4. Պորտֆելի ցուցակումը և զուտ ակտիվների արժեքի կազմը

| ISIN | Անվանումը | | Հաշիվ ՀՀ ԴՐԱՄ | Գնման անվանա-կան արժեք | Վաճառքի անվանական արժեք | Գինը | Շուկայական արժեք ՀՀ դրամով % | % |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Պարտատոմսեր** | | | | | | | | |
| AMGB10172218 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 11/21 | ՀՀ ԴՐԱՄ | 6.500.000 | 6.500.000 | | 99,028662 | 6.436.863,03 | 8,31 |
| AMGN36294175 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 14/17 | ՀՀ ԴՐԱՄ | 15.000.000 | 15.000.000 | | 95,998263 | 14.399.739,50 | 18,58 |
| **Ընդամեը ՀՀ պետական պարտատոմսեր** | | | | | | | **20.836.602,53** | **26,89** |

| | | |
|---|---|---|
| **Դրամական միջոցներ** | | |
| ՀՀ ԴՐԱՄ | 4.998,62 | 0,01 |
| Ավանդ | | |
| ԱՄՆ դոլար | 4.512.215,00 | 5,82 |
| ՀՀ Դրամ | 49.578.000,00 | 63,97 |
| **Ընդամենը դրամական միջոցներ** | **54.095.213,62** | **69,80** |
| **Հաշվեգրումներ և հետաձգումներ** | | |
| Եկամտի հաշվեգրումներ | 2,757,222.18 | 3,56 |
| Ծախսերի հաշվեգրումներ | (189.126,02) | (0,24) |
| **Ընդհանուր հաշվեգրումներ և հետաձգումներ** | **2.568.096,20** | **3,31** |
| **Ընդհանուր զուտ ակտիվների արժեքը** | **77.499.912,31** | **100,00** |

| | | |
|---|---|---|
| **Զուտ ակտիվների արժեքը մեկ փայի գծով** | **ՀՀ ԴՐԱՄ** | 1.059,75 |
| **Չմարված փայեր** | **ՓԱՅԵՐ** | 73.130,075 |